ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 փետրվարի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

12
(2862)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱԿ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՄԻԱՅՆ ԼՍԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ն ԲԴԽ անդամի գիտնական թեկնածու Կարեն Թումանյանի հետ հանդիպել է 2023 թվականի դեկտեմբերի 22-ին ԱԺ 334 սենյակում: Ըստ մեզ հասած լուրերի՝ ՔՊ-ականներին Թումանյանի թեկնածությունը ներկայացրել է Արփի Դավոյանը ու գովել նրան: ՔՊ-ականները հանդիպմանը հարցեր չեն տվել, քանի որ մինչ այս հանդիպումը Թումանյանի հետ հանդիպումներ ունեցել են այլ պաշտոնի թեկնածուի կարգավիճակով, մասնավորապես՝ երբ նա ցանկացել է ընտրվել Վճռաբեկ դատարանի դատավոր, սակայն ՔՊ-ն նրան չընտրեց:

Մեզ ՔՊ-ի աղբյուրներից հայտնի դարձավ, որ նախկին հանդիպումներից մեկի ժամանակ ՔՊ-ականները ակտիվ են եղել ու շատ հարցեր են տվել, իսկ այս հանդիպմանը միայն լսել են:

Տեղեկացնենք, որ ՔՊ-ականների հետ դռնփակ նախկին հանդիպումներից մեկի ժամանակ պատգամավորներից մեկը հարցրել է, թե զինծառայության հետ ինչ խնդիր է եղել, Թումանյանը պատասխանել է՝ որեւէ խնդիր չկա, բոլոր հարցերը կարգավորված են օրենքով:

Իսկ երբ մի քանի ՔՊ-ականներ եւս սկսել են հետաքրքրվել, թե ծառայության հետ ինչ խնդիր է եղել, ամեն դեպքում, նրանց պատասխանել են՝ հեչ:

Ըստ մեր տեղեկությունների՝ թեկնածուի ընտրությունը կկայանա առաջիկա լիագումար նիստում, ու ՔՊ-ին հրահանգված է միաձայն քվեարկել Թումանյանի օգտին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթի ձեռքի տակ է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված փաստաթուղթն այն մասին, թե ինչ հիմքով է ազատվել բանակից Կարեն Թումանյանը: Ըստ այդմ՝ նա հասցրել է մինչեւ զորակոչը ունենալ 2 երեխա: Թումանյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել է, որ իր կյանքում 1 անգամ է ամուսնացել՝ 2012 թվականին, այսինքն՝ 36 տարեկանում, եւ հարց է առաջանում, թե այդ դեպքում ինչպես է 1994թ.-ին 18-ը բոլորած Թումանյանը ազատվել պարտադիր զինծառայությունից, եթե 36 տարեկանում է ամուսնացել եւ ակնհայտորեն ունի փոքր կին եւ երեխաներ: Լուրեր կան, որ նա արդեն 2 երեխա ունեցող մի կնոջ հետ է ամուսնացել, որից հետո բաժանվել է, ապա այդ կնոջ հետ է ամուսնացել նրա հայրը: Թումանյանը հերքեց այդ տեղեկությունը՝ ասելով, որ մեկ անգամ է ամուսնացել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե Հակակոռուպցիոն կոմիտեում ինչ ցուցմունք է տվել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանը: Տեղեկացնենք, որ պոռոտախոս թաղապետը, որ ակտիվ է ակումբերում պարելիս, նախաքննական մարմնում շատ քիչ է խոսել ու ընդամենը քննիչին հայտնել է, թե տեղյակ չի եղել, որ իր ենթակաները նման հակաօրինական բաներ են արել, ու, առհասարակ, իր ենթակաների պահվածքի մասին իմացել է մամուլից: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանում որպես վկա է հրավիրվելու հարցաքննության Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը: Նշենք, որ իրավապահները կաշառքի քրգործով կալանավորել են Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կոմունալ տնտեսության եւ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Ռաֆիկի Մարտիրոսյանին, նույն բաժնի առաջատար մասնագետ Արման Նվերի Հարությունյանին: Ըստ նախաքննական մարմնի պաշտոնական տեղեկության՝ վերջիններս նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, ունենալով տեղական ինքնակառավարման մարմնի անունից հանդես գալու լիազորություն, ինչպես նաեւ նույն մարմնի անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձինք, Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի՝ հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքներն իրականացնող «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության տնօրեն Կամո Գերասիմի Գեւորգյանի նկատմամբ իրենց ծառայողական լիազորությունների իրականացման հետ կապված ընդհանուր բերեհաճ վերաբերմունքի համար 2023 թվականի հուլիսի 11-ին Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմի վարչական շենքում Կամո Գեւորգյանից ստացել են խոշոր չափերով՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ կաշառք-գումար, որը վերջինս անձամբ տվել է Տիգրան Մարտիրոսյանին, որը ստացված կաշառք-գումարից 150.000 դրամը հաջորդ օրը փոխանցել է Արման Հարությունյանին: Նկատենք, որ նախաքննական մարմինը պատասխանատվության չի կանչել Կենտրոնի թաղապետ Սամվել Ղուկասյանին այն բանի համար, թե ինչպես եղավ, որ նրա ենթակաները, առանց իր իմացության, նման պատժելի քայլի գնացին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը, ըստ ամենայնի, հարցաքննության կհրավիրի ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանին, քանի որ նախաքննական մարմնում քննարկվել է հարց, որ նախարարի հաստատումով են կատարվել գնումների գործընթացները: Հիշեցնենք, որ երեկ ArmLur.am-ը հայտնեց, որ Քննչական կոմիտեն էկոնոմիկայի նախարարության չարաշահումների քրեական գործով 7 անձի մեղադրանք է առաջադրել, որոնց մեջ էին նաեւ պաշտոնից ազատված փոխնախարար Անի Իսպիրյանը եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը: Քրեական գործով անցնող 7 մեղադրյալները կալանավորված են: Նշենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ձեռնարկված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթի շրջանակներում կատարված քննչական եւ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք նախնական համաձայնությամբ, մի խումբ անձանց դրդմամբ եւ օժանդակությամբ չարաշահել են ծառայողական լիազորությունները: Այս խմորը դեռ երկար ջուր կտանի:

Արցախի պատգամավորները մտադիր են ԱԺ քննիչ հանձնաժողով ստեղծել: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրներն են փոխանցում, 2023թ.-ի մարտից քաղաքացիների աշխատավարձերից պահվող գումարները չեն փոխանցվել կենսաթոշակների կուտակային ֆոնդին, այլ ուղղվել են անհայտ ինչ-որ ծախսերի: Արցախի մեր աղբյուրների փոխանցմամբ՝ կենսաթոշակային կուտակային ֆոնդի շահառու են հանդիսանում մոտ 35.000 ԱՀ քաղաքացի, որոնց իրավունքները փաստացի կոպտորեն խախտվել են: Մեր տեղեկություններով՝ Արցախի պատգամավորները օրերս այս հարցով փակ քննարկում են արել ու կոնսենսուսի են եկել, որ պետք է քննիչ հանձնաժողով ստեղծել, որպեսզի պարզեն՝ ինչին են ուղղվել քաղաքացիների կուտակային գումարները, եւ ով է դրա պատասխանատուն:

ԶՐՈՒՅՑ

«ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՇԱՀ ԵՆ ՍՊԱՍԱՐԿԵԼ»

«Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Լուսինե Հակոբյանը ArmLur.am-ի հետ զրույցում, անդրադառնալով նախորդ տարեվերջին տեղի ունեցած ԿԿՀ անդամների ընտրության տաղավմանը, թեկնածուների նկատմամբ գործադրվող ճնշումներին, արձանագրում է՝ Հայկուհի Հարությունյանի նկատմամբ թշնամական վերաբերմունք էր ձեւավորվել. հավանաբար, իշխանականներին դուր չեն եկել նրա կայացրած որոշումները:

-Տիկին Հակոբյան, Ազգային ժողովը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թեկնածուների նոր մրցույթ է հայտարարել: Նախորդ տարեվերջին իշխանությունները տապալեցին անդամի ընտրությունը, չգնացին քվեարկության, եւ հենց ուղիղ եթերում տեսանք, թե ինչ կատարվեց կին թեկնածուների նկատմամբ, ինչպիսի ճնշումներ գործադրվեցին: Ի՞նչ գնահատական այս ամենին կտաք, ինչո՞ւ, եթե նախկինում նման դեպք էր լինում, շատ բուռն հասարակական հնչեղություն էր ստանում, հիմա ինչո՞ւ են լռում, ինչո՞ւ են պասիվ դիտորդի կեցվածք որդեգրել:

-Մի քանի փաստական ճշտում անեմ. եթե իմ հիշողությունը չի դավաճանում, մի կին թեկնածուի նկատմամբ է եղել ճնշում: Չէի ասի, որ կին էր, դրա համար էր. կարծում եմ, որ որոշակի որոշումներ իշխանական կուսակցության որոշ անդամների չէին գոհացրել, եւ արդեն ինձ մոտ էլ համոզմունք ձեւավորվեց, որ, իրոք, հիմնականում դա էր պատճառը: Նաեւ հենց կոնկրետ Մարիա Կարապետյանն էլ իր բավական մտերիմ ընկերոջ հարցերն էր բարձրացնում, որն, ընհանրապես, իմ կարծիքով, Ազգային ժողովի լիագումար նիստի քննարկման թեմա չէր: Ձեր թերթն էլ բացահայտել էր, որ մտերիմ ընկերը Համազասպ Դանիելյանն էր: Ինձ մոտ խորացավ այն համոզմունքը, որ ֆրակցիայի որոշ անդամներ, իրոք, ունեին անձնական խնդիրներ այդտեղ: Ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, թե ինչու քաղհասարակությունը ակտիվ չէր, կարծում եմ՝ քաղհասարակության անդամներ կային, որոնք ակտիվ էին. լսեցինք իրենց ձայնը: Նաեւ հիշեցնեմ, որ Եվրամիություն-Հայաստան քաղհասարակության պլատֆորմը նունպես հայտարարություն տարածեց: Կհամաձայնեմ, որ կան հասարակական կազմակերպություններ՝ իրենց հետ օրակարգը սպասարկելու շրջանակում են այդ լռությունը դրսեւորել: Կուզենայի հատուկ անդրադառնալ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնին, նշել, որ այդ նույն թեմայի հետ կապված այս կենտրոնը եւս ուներ որոշակի շահագրգռություն՝ նույն Համազասպ Դանիելյանի թեմայի հետ կապված: Կարծում եմ, որ որոշակի դեր խաղացել է նաեւ հենց այդ անձի հետ կապված խնդիրը, որովհետեւ նա մեկն է, որ երկար տարիներ վճարովի ծառայություններ է մատուցել նաեւ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ»-ին, եւ կորպորատիվ շահ են բոլորով սպասարկել:

-Տիկին Հակոբյան, Դուք էլ Ձեր խոսքում անդրադարձաք, մենք էլ հիշում ենք, որ ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմն այդ օրերին՝ մինչ ընտրությունն անգամ հայտարարություն էր տարածել՝ անդրադառնալով մամուլում հրապարակված այն տեղեկություններին, որ Հայկուհի Հարությունյանի եւ իշխանական պատգամավորների փակ հանդիպման ընթացքում եւս նրա նկատմամբ շատ ճնշումներ են գործադրվել, եւ հենց հայտարարության մեջ դիմել էիք Նիկոլ Փաշինյանին՝ հորդորելով հետաձգել ընտրությունը: Ինչո՞ւ իշխանությունները ակնկալուր չեղան Ձեր հայտարարությանը եւ քայլեր չձեռնարկեցին այս ամենը կանխելու համար:

-Որոշակի ագրեսիա կար այդ հայտարարության մասով, որոշ պատգամավորներ անթաքույց իրենց դժգոհությունն էին արտահայտում այդ հայտարարության վերաբերյալ, ինչը եւս նորմալ չեմ դիտարկում, որովհետեւ քաղհասարակության քննադատությունը, ինչպես նաեւ գովեստի խոսքերը իրենք պետք է կարողանան սթափ եւ սառնասիրտ ընդունել, այլ ոչ թե հիստերիկայի մեջ ընկնել: Մանավանդ այն գործընկերները, որոնք քաղհասարակության գործընկերներ են եղել ժամանակին, պետք է հասկանան, որ ԵՄ-Հայաստան պլատֆորմի անդամները օբյեկտիվ են, եւ շատ տարբեր թեմաների շուրջ մենք արտահայտվել ենք, նույն Ալեն Սիմոնյանի հետ կապված միջադեպին էինք անդրադարձել՝ ասելով, որ սելեկտիվ արդարադատությունը պետք է բացառել: Մեր քննադատությունը հարկ է ընդունել եւ քայլեր ձեռնարկել իրավիճակը շտկելու ուղղությամբ, այլ ոչ թե հարձակումներ գործել մեզ վրա: Ինչ վերաբերում է արձագանքին, ես կարծում եմ, որ որոշ հարցեր կան, որոնց շուրջ Նիկոլ Փաշինյանը հարկ չի համարում ընդհարվել իր թիմի հետ եւ համարում է, որ եթե թիմը այդպես է որոշում, թող այդպես լինի, բայց տեսնում ենք, որ շատ այլ հարցեր՝ ընդհուպ մինչեւ տեղական ինքնակառավարմանը վերաբերող հարցեր, նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ակտիվի հետ քննարկում է, իսկ դա այդ հարցը չէր, որ պետք է չքննարկվեր: Ես կարծում եմ, որ սխալ որոշում էր ընդհանրապես:

ԺԱՄԿԵՏ ՉԿԱ

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

«Հայաստանում նախատեսվող նոր Սահմանադրության ընդունման համատեքստում կոնկրետ իրավակարգավորումների հետ կապված քննարկումները չեն սկսվել»,- խորհրդարանում լրագրողների հետ զրույցում ասաց արդարադատության փոխնախարար Արա Մկրտչյանը:

«Դեռեւս հստակ որեւէ ժամկետ սահմանված չէ: Նույնիսկ դեռ քննարկումները սկսված չեն՝ կոնկրետ իրավակարգավորումների հետ կապված: Ուստի, այս պահին ժամկետների մասին խոսելը նույնպես արդի չէ»,-ասաց փոխնախարարը:

Անդրադառնալով քննարկումներին, թե փորձ է արվում Սահմանադրությունից հանել հղումն Անկախության հռչակագրին՝ նա ընդգծեց, որ դեռեւս որեւէ նոր իրավակարգավորումների շուրջ մասնագիտական քննարկում սկսված չէ: Նոր Սահմանադրության ընդունման հարթությունում որեւէ քննարկում չի եղել թե՛ վերոնշյալ բովանդակությամբ, թե՛ առհասարակ:

Ըստ նրա՝ վարչապետը հստակ նշել է նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտության հիմքերը:

Մկրտչյանն ընդգծեց՝ լեգիտիմ եւ ճիշտ Սահմանադրությունը երկրի իրավական հիմքն է, ոչ միայն տարածաշրջանում, այլ ընդհանրապես մրցունակության կարեւոր բաղադրիչներից մեկն է: «Եթե մենք ունենք լավ Սահմանադրություն, գործող Սահմանադրություն եւ դրա հիման վրա կառուցում ենք սոցիալական, ժողովրդավարական հանրապետություն, ուրեմն մենք հզոր ենք դրանով: Գործող Սահմանադրությամբ էլ մեր երկիրը ժողովրդավար եւ մրցունակ է, սակայն հասարակական հարաբերությունները զարգացող հարաբերություններ են, իրավունքը նույնպես զարգացող հարաբերություն է. դրանք քարացած չեն եւ ենթակա են փոփոխության»,-նշեց նա:

Նոր սահմանադրության ընդունման անհրաժեշտության մասին հունվար ամսին խոսել էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Վարչապետը հայտարարել էր, որ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության: Ըստ նրա՝ Հայաստանը պետք է ունենա Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունն ավելի մրցունակ եւ ավելի կենսունակ է դարձնում աշխարհաքաղաքական եւ ռեգիոնալ նոր պայմաններում:

Նյութերը՝ ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԻ

ՄԵՂԱԴՐԵԼ ԵՆ ՀԻՎԱՆԴԻՆ

Վերջերս համացանցում տեղեկություններ են տարածվել, որ Հայաստանում հիվանդներին տալիս են մի ինսուլին, որից շատ երկրներ հրաժարվել են:

ArmLur.am-ին ահազանգած 28-ամյա Մարինե Բաբայանը պատմում է. «Ես 10 տարի է, ինչ ունեմ շաքարային դիաբետ, եւ 10 տարի է օգտագործում եմ ինսուլին: Այս տարվա 2023 թվականի սեպտեմբերից սկսած՝ նախարարությունը, ինսուլոտարդի փոխարեն, տրամադրում է գենսուլին: Դա օգտագործելու ֆոնի վրա իմ թվերը ահավոր բարձրանում են, առավոտյան արթնանում եմ, 15 է, հետո բարձրանում է մինչեւ 20-25 թվով, իսկ ինսուլոտարդի պարագայում 5.5-ից մինչեւ 6 էր բարձրանում»:

Մարինեն սկզբում մտածել է, որ դեղը նոր է, օրգանիզմը չի հարմարվում նոր դեղատեսակին, եւ դեղի միավորը սկսել է բարձրացնել մինչեւ 100 միավոր:

«Անգամ 100 միավոր գենսուլին ներարկվելու պարագայում նորից արթնանում էի 15-ից բարձր թվով»,-ասում է նա:

Նրա խոսքով՝ նա դիմել է Առողջապահության նախարություն՝ ասելով որ ինսուլինը չի օգնում իրեն: Դրան ի պատասխան՝ ասել են՝ այդ դեղերի միջեւ տարբերություն չկա:

«Երբ որ իրենց փաստացի ներկայացնում եմ իմ ներարկված դոզաները ու իմ բարձր թվերը, իրենք առաջարկում են, որ օգտագործեմ միքստարդ, որը 70/30 խառնուրդ է: Ես իրենց մանրամասն բացատրում եմ, որ այդ դեղերը չի կարող փոխարինել մեկը մյուսին, իրենք ինձ ասում են՝ գենսուլինը Հայաստանում անցել է փորձաքննություններ, սերտիֆիկատ է ստացել, եւ որակի հետ կապված խնդիր չկա»:

Մեղադրելով կնոջը՝ ասել են, որ կինը չի պահել համապատասխան դիետաները:

«ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ»

Երեկ հայտնի դարձավ, որ ձերբակալվել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր՝ Կառլեն Սիմոնյանի կինը՝ Անի Գեւորգյանը:

ArmLur.am-ը հայտնել էր նաեւ, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջը կալանավորելու միջնորդություն է ներկայացվել դատարան:

Անդրադառնալով ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կնոջ մասով այս աղմկահարույց դեպքին՝ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանն ասում է.

«Իրավապահներն իրենց գործն են անում, ես ի՞նչ գնահատական կարող եմ տալ. մենք չենք կարող գնահատական տալ այն իմաստով, որ անմեղության կանխավարկածի հարց կա, հետեւաբար իրավապահների տիրույթում է դա, նրանք պետք է պարզաբանեն»:

Ինչ վերաբերում է խոսակցություններին, որ ՔՊ-ում Ալեն Սիմոնյանի մասով շատ դժգոհություններ կան, նրա ու թիմակիցների հարաբերությունները լարված են, Աղազարյանն արձագանքեց.

«Նման բան չկա, Ալեն Սիմոնյանը մեր թիմի առանցքային ներկայացուցիչներից է, եւ որեւէ խնդիր կամ դժգոհություն չկա»:

«ԱՊՐՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ»

«Հայաստանի իշխանություններն ունեն նոր Սահմանադրություն ընդունելու գաղափար, որին անդրադարձ լինելու է, սակայն այս պահին որեւէ մշակում չկա»,- խորհրդարանում լրագրողների հետ զրույցում ասաց ԱԺ պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը:

«Լեգիտիմությունը մենք չենք կարող դնել կասկածի տակ, քանի որ բոլորս գործում ենք գործող Սահմանադրության հիման վրա: Բայց դրա հետ զուգահեռ ես կուզենայի, որ մենք Սահմանադրությունը դիտարկեինք որպես ապրող փաստաթուղթ, որը փոփոխելու, վերափոխելու, վերանայելու կարիք է առաջանում հասարակական հարաբերությունների զարգացման փուլում՝ սահմանադրի քվեի առկայության պարագայում»,-ասաց Վարդանյանը:

Պատգամավորն ընդգծեց՝ Հայաստանի Հանրապետությունը ո՛չ առաջինն է, ո՛չ էլ վերջինը, որ անկախությունից հետո քննարկում է անցկացնում ոչ միայն սահմանադրական բարեփոխումների, այլ նաեւ նոր Սահմանադրության տեքստի հետ կապված: «Որոշողը սահմանադիրն է, որը հանրաքվեին քվեարկելու է այս կամ այն Սահմանադրության օգտին»,-նշեց նա:

Ըստ նրա՝ այս պահի դրությամբ կա գաղափար, եւ դա կքննարկվի Սահմանադրական բարեփոխումների խորհրդում:

Անդրադառնալով հարցին, թե հնարավոր է արդյոք Սահմանադրությունից հանվի Անկախության հռչակագրի հղումը՝ պատգամավորը պատասխանեց, որ ինքը չէ հրաժարվողը: «Եթե Սահմանադրության նոր տեքստը դրվի սահմանադրական հանրաքվեի, քանի որ այլ եղանակ չկա, ապա սահմանադիրն է որոշելու, թե Սահմանադրության մեջ ինչ տեքստ է լինելու՝ առաջին նախադասությունից մինչեւ վերջ»,-նշեց պատգամավորը:

Ըստ նրա՝ մշակում չկա, կա գաղափար, եւ գաղափարի շրջանակում կարող են սկսվել քննարկումներ: «Կա գաղափար, եւ այդ գաղափարին անդրադարձ լինելու է»,-ասաց պատգամավորը:

Նոր սահմանադրության ընդունման անհրաժեշտության մասին հունվար ամսին խոսել էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Վարչապետը հայտարարել էր, որ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության: Ըստ նրա՝Հայաստանը պետք է ունենա Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունն ավելի մրցունակ եւ ավելի կենսունակ է դարձնում աշխարհաքաղաքական եւ ռեգիոնալ նոր պայմաններում:

ԱՐՑԱԽ

ՄՏՔԵՐ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց սոցիալ-տնտեսական ներառման ծրագրերի ընթացքին ու նախատեսվող միջոցառումներին վերաբերող հարցեր:

Կառավարության «Հումանիտար կենտրոն»-ի աշխատանքները համակարգող փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը զեկուցել է, որ մարզերում տեղաբաշխված՝ բռնի տեղահանված անձանց սննդային ապահովվածության նպատակով մարզպետարանների միջոցով հասցեագրվել է 4.4 միլիարդ դրամ: 112 հազար անձ եղել է միանվագ 100 հազարական դրամ աջակցություն ստանալու շահառու: «Ավելի ուշ սահմանեցինք կեցության եւ կոմունալ ծախսերի աջակցության ծրագիրը, որով ով բնակարան ուներ, 10 հազար դրամի չափով էինք աջակցում, ով բնակարան չուներ՝ 40+10: Այս աջակցությունը 6 ամիսների համար է, որոնցից արդեն 3 ամիսներն անցել են: Սա կշարունակվի մինչեւ մարտ ամիսը ներառյալ»,- ասել է Տիգրան Խաչատրյանը:

Փոխվարչապետի խոսքով՝բռնի տեղահանված 17 հազար աշակերտ ընդունվել է հանրակրթական դպրոցներ, 4 հազար ուսանողի համար միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվում է կրթաթոշակի աջակցության ծրագիր: Այս թիվն առաջիկայում կավելանա:

«Առողջապահության բնագավառում ունենք 69 հազար մարդ, ովքեր առաջնային օղակում հաշվառվածներն են: Սա նաեւ խողովակ է, որով իրենք կարողանում են պետական պատվերի շրջանակում հիվանդանոցային ծառայություններից օգտվել: Այսօրվա դրությամբ մոտ 7 հազար դեպք ունենք, որոնցով անձինք օգտվել են նաեւ պետպատվերով հիվանդանոցային ծառայություններից: Ունենք 20 հազար 656 դիմումներ կենսաթոշակառուների կամ նպաստառուների վերաբերյալ, 11 հազար 800-ի կենսաթոշակներն արդեն վճարվում են: Հիշեցնեմ, որ վճարումները կատարել ենք հոկտեմբերից հաջորդող բոլոր ամիսների համար, ուղղակի, քանի որ դիմումները կառուցված են նաեւ հաշվառվելու մոտեցման վրա, պետք է անձը հաշվառվի եւ դիմում ներկայացնի: Սա պրոցես է, որը կշարունակվի մինչեւ բոլորի ամբողջական ներառումը համակարգում: Ունենք նաեւ 2408 դիմումատուներ, ովքեր նպաստների համար են դիմել. նրանցից 585-ը փաստացի իրենց նպաստները ստացել են:

Զբաղվածության մասում 212 ուսուցիչներ մեր աջակցության ծրագրի շրջանակում գործուղվել են մարզեր, բուժաշխատողներից 202-ն աշխատանք են գտել տարբեր հաստատություններում: Ընդհանուր առմամբ, 725 մարդ դիմել է մասնագիտական վերապատրաստման ծրագրերին մասնակցելու համար, եւ հնարավորություն ենք տվել, որպեսզի իրավաբանական անձինք իրենց գործունեության շարունակականությունն ապահովելու համար մինչեւ այսօր վերագրանցվեն եւ կարողանան սահուն կերպով շարունակել տնտեսական գործունեությունը»,- ասել է փոխվարչապետը: Նշվել է նաեւ, որ 2023 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ, Պետական եկամուտների կոմիտեի տվյալներով, բռնի տեղահանված 10 հազար մարդ հաշվառվել է որպես վարձու աշխատող:

Հաջորդիվ անդրադարձ է կատարվել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց բնակարանային խնդիրներին եւ դրանց լուծման հնարավորություններին՝ հաշվի առնելով նաեւ տարածքային համաչափ զարգացման խնդիրը: Այս համատեքստում մտքեր են փոխանակվել աջակցության հնարավոր գործիքների շուրջ, ներկայացվել են տարբեր դիտարկումներ ու առաջարկություններ:

Վարչապետ Փաշինյանը կարեւորել է սոցիալական ծրագրերի ներդաշնակեցումը եւ հանձնարարել պատասխանատուներին՝ շարունակել քննարկումները ներկայացված գաղափարների ու առաջարկությունների շուրջ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՆԱՉ ԼՈՒՅՍ

ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԱԼԻՔ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի շուրջ օղակը սեղմվում է. Սիմոնյանի ու նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ իրավական ու պետական ճնշումների մի նոր ալիք է սկսվել:

Բանն այն է, որ Ալեն Սիմոնյանն արդեն տեւական ժամանակ է, ինչ իրեն արտոնյալի պես է պահում, ու այնքան է հատել թույլատրելի սահմանները, որ ՔՊ-ում դժգոհությունների մեծ ալիք է առաջացրել նրա այս պահվածքը:

Ալեն Սիմոնյանը, ըստ ՔՊ-ականների, չարաշահելով իր պաշտոնեական դիրքը, օգտագործում է պետական լծակները իր ու իր շրջապատի բարեկեցությունն ու ֆինանսն ապահովելու համար:

Վերջին շրջանում բոլոր մրցույթներում հաղթում են Ալեն Սիմոնյանի եղբայրը կամ նրա մտերիմներից որեւէ մեկը:

Ահա, Ալեն Սիմոնյանի նկատմամբ ձեւավորված այս անպատժելիության մթնոլորտը բարկացրել է ՔՊ-ականներին, ու նրանք պարբերաբար այս մասին զեկուցել են Նիկոլ Փաշինյանին ու պահանջել են զսպել Սիմոնյանին:

Եթե սկզբում Փաշինյանն ականջալուր չէր լինում իր թիմակիցներին ու ոչինչ չէր ձեռնարկում, ապա հիմա նա կանաչ լույս է վառել, որ Սիմոնյանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառվեն: Սրա առաջին ծիլերը երեւացին օրեր առաջ:

«Ժողովուրդ» օրաթերթը դեռ հունվարի 11-ին գրել էր, որ ԲՏԱ նախարարությունը սանկցիա է կիրառել ԱԺ նախագահի կնոջ Freenews TV-ի նկատմամբ, քանի որ պետության պարտքերը չի մարել:

Երեկ էլ հայտնի դարձավ, որ ձերբակալվել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր՝ Կառլեն Սիմոնյանի կինը՝ Անի Գեւորգյանը:

Այսինքն՝ Ալեն Սիմոնյանի ընտանիքի անդամների ու նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ իրավական ու պետական ճնշումների ալիք է սկսվել:

Մեզ մնում է սպասել զարգացումներին:

Մի բան հստակ է. Ալեն Սիմոնյանը, լինելով ԱԺ նախագահ ու ՔՊ վարչության անդամ, իր թիմի ներսում չունի աջակցություն, հակառակը՝ ՔՊ-ականները ծափահարություններով ու ոգեւորությամբ են ընդունում Ալեն Սիմոնյանի ու նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ կիրառվող այս ճնշումները:

ArmLur.am-ը առաջիկայում կներկայացնի մանրամասներ՝ինչպես է Սիմոնյանի ու նրա մտերիմների շուրջ իրավիճակ փոխվում:

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ԿԱՆԱՅՔ՝ ԿԱԼԱՆՔԻ ՎՏԱՆԳԻ ԱՌՔԵՎ

ArmLur.am-ը հայտնել էր, որ Հակակոռուպցիոն դատարանում քննվում են Էկոնոմիկայի նախարարության գնումների գործընթացում չարաշահումների մասով հարուցված քրեական գործերով անցնող անձանց խափանման միջոցների՝ կալանավորման միջնորդությունների հարցերը: ArmLur.am-ի տեղեկություններով՝ փոխնախարար Անի Իսպիրյանը եւ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, կկալանավորվեն:

Հիշեցնենք, որ քիչ առաջ հայտնեցինք, որ կալանավորվածների մեջ է նաեւ «Սիներջի» ընկերության բիզնես բաժնի ղեկավար Լիլի Մկրյանը, որն ունի 2-ամյա երեխա եւ մայրական կաթ է տալիս, սակայն դատարանը նրան կալանավորել է:

Հիշեցնենք, որ երեկ ArmLur.am-ը հայտնեց, որ Քննչական կոմիտեն Էկոնոմիկայի նախարարության չարաշահումների քրեական գործով 7 անձի մեղադրանք է առաջադրել, որոնց մեջ էր նաեւ երեկ պաշտոնից ազատված փոխնախարար Անի Իսպիրյանը: Ավելի ուշ Քննչական կոմիտեն մանրամասներ հայտնեց՝ նշելով, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից ձեռնարկված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների, այնուհետեւ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում իրականացվող քրեական վարույթի շրջանակներում կատարված քննչական եւ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք, նախնական համաձայնությամբ, մի խումբ անձանց դրդմամբ եւ օժանդակությամբ չարաշահել են իրենց ծառայողական լիազորությունները:

Նախաքննությամբ, մասնավորապես, պարզվել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձինք «Հանրային ներդրումային ծրագրերի բանկի ստեղծման» ծառայության ձեռքբերման մրցույթի ընթացքում մրցույթի մասնակից N բաժնետիրական ընկերության տնօրենի եւ աշխատակիցների դրդմամբ եւ օժանդակությամբ, մրցույթին այդ ընկերության հաղթանակն ապահովելու համար, խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ N 526-Ն որոշման պահանջները, մրցույթի մյուս մասնակից հիմնադրամի համար ստեղծել են մրցույթին վերջինիս մասնակցությունն իբր անհնար դարձնող պայմաններ, նրան ապօրինաբար դիտել որպես մրցույթի պայմաններին չհամապատասխանող ու փաստացի հեռացրել մրցույթից: Դրա արդյունքում մրցույթում հաղթող է ճանաչվել մրցակցից շուրջ երեք անգամ ավել՝ ավելի քան 392մլն ՀՀ դրամ գնային առաջարկ ներկայացրած ընկերությունը:

Նշված գործողությունների արդյունքում խախտվել են մրցույթի մասնակից հիմնադրամի իրավունքներն ու օրինական շահերը, էական վնաս է պատճառվել պետությանը:

Նշված քրեական վարույթի շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի եւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից համատեղ իրականացված օպերատիվ-քննչական միջոցառումների արդյունքում ձերբակալվել է 6 անձ:

Մյուս քրեական վարույթով, որի նախաքննությունն իրականացվում է ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում, կատարված քննչական եւ գաղտնի քննչական գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնատար անձը, օժտված լինելով համապատասխան լիազորություններով, ինտենսիվ այգիների հիմնման պետական աջակցության ծրագրի շահառու հանդիսացող Վ.Դ.-ի հետ գտնվելով մտերիմ հարաբերությունների մեջ եւ իմանալով վերջինիս ծանոթներ՝ այլ շահառուների տվյալները, 2022-2023 թվականների ընթացքում նրանց կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացված այգեհիմնման նպատակով գյուղատնտեսական ծառայությունների մատուցման կամ ապրանքների ձեռք բերման վերաբերյալ կատարված՝ ծրագրով սահմանված պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացված լինելու պայմաններում նրանց տրվող ֆինանսական փոխհատուցումը չի մերժել, այլ ընդհակառակը՝ զեկուցագրեր է ներկայացրել այն մասին, որ շահառուների կողմից կատարված աշխատանքները համապատասխանում են ծրագրով սահմանված չափորոշիչներին:

Դրանից հետո խնդրել է հանձնարարական՝ նախարարության համապատասխան վարչությանը՝ ծրագրի համաձայն իրականացնել վճարումներ շահառուների հաշվեհամարներին: Արդյունքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից նշված ծրագրով մի շարք շահառուների բանկային փոխանցման միջոցով անհիմն փոխհատուցվել է առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուրը 238.418.100 ՀՀ դրամ գումար, որը Վ.Դ.-ի եւ այլ շահառուների կողմից խարդախությամբ հափշտակվել է:

Այս քրեական վարույթով ՀՀ քննչական կոմիտեի եւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից համատեղ իրականացված օպերատիվ-քննչական միջոցառումների արդյունքում նշված պաշտոնատար անձը ձերբակալվել է:

Երկու քրեական վարույթներով ակտիվ նախաքննությունը շարունակվում է:

Ըստ անհրաժեշտության՝ ՀՀ քննչական կոմիտեն հետագայում հանդես կգա պաշտոնական հաղորդագրությամբ:

ՍՅՈՒՆԻՔ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում քննություն է տարվում՝ առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ մաքսանենգության հերթական դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ: Այս մասին հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից:

«ՀՀ ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ապա նաեւ ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության քննիչների կողմից իրականացրած վարութային եւ ապացուցողական անհրաժեշտ գործողությունների արդյունքում պարզվել են խմբի կողմից թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքի մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ խմբի անդամներից չորսի ինքնությունը, որոնք հանդիսանում են Արմավիրի մարզի բնակիչներ: Մասնավորապես, պարզվել է, որ հանցավոր խմբի հիշյալ չորս անդամները պայմանավորվածություն են ձեռք բերել Իրանի Իսլամական Հանրապետությունում բնակվող անձի հետ՝ իրացնելու նպատակով, մաքսանենգ եղանակով առանձնապես խոշոր չափերով տարբեր տեսակի թմրամիջոցներ Հայաստան տեղափոխելու շուրջ: 2024թ. հունվարի 25-ին հիշյալ անձինք ավտոմեքենայով գնացել են Մեղրի քաղաքի մոտ գտնվող սահմանային գոտի, որտեղ ԻԻՀ վերոհիշյալ բնակչի հրահանգով ինքնությունը չպարզված անձը, մաքսային հսկողությունից թաքցնելով, Իրանի Իսլամական Հանրապետությունից փոխանցել է տոպրակների մեջ փաթեթավորված վիճակում տարբեր տեսակի թմրամիջոցների նմանվող՝ ընդհանուր շուրջ 13կգ քաշով զանգվածներ, որոնց մի մասը հանցավոր խմբի անդամները թաքցրել են վերը նշված ավտոմեքենայում, իսկ մնացած մասը հետագայում վերցնելու եւ իրացնելու նպատակով թաքցրել են սահմանագոտուն հարակից տարածքում, որը հետագայում գտնվել եւ առգրավվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից: Նշանակված փորձաքննության եզրակացությամբ արդեն իսկ հաստատվել է, որ հայտնաբերված զանգվածից 349,15 գրամը հանդիսանում են «Մեթամֆետամին» տեսակի, իսկ 1146,58 գրամը՝ «Մարիխուանա» տեսակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ, մնացած մասով փորձաքննությունը դեռեւս շարունակվում է: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ հիշյալ չորս անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը), 46-399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգությանն օժանդակելը): Միջնորդություններ են ներկայացվել դատարան՝ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է: Ուստիկանությանն համապատասխան ստորաբաժանմանը տրվել են հանձնարարություններ»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԵՏՆ ԱԶԱՏՎԵԼ Է ՊԱՇՏՈՆԻՑ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով՝ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ Արման Մելքոնյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը նախորդ տարի նոյեմբերի 11-ին գրել էր, որ ծառայողական լիազորությունները վերազանցելու համար Արդարադատության նախարարության «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Արման Մելքոնյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Բանն այն է, որ օգոստոսի 1-ին, երբ ԱԱԾ մեկուսարանից պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանին տեղափոխել էին Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին, ճանապարհին Դավիթ Տոնոյանը խնդրել էր ուղեկցողներին, որ թույլ տան կարճ տեսակցել մորը, հետո շարունակել ճանապարհը դեպի Ազգային ժողով: Տոնոյանին ուղեկցող ծառայողները կապ էին հաստատել վերադասի հետ, որը թույլ էր տվել՝ Տոնոյանը գնա տուն ու տեսակցի մորը՝ պայմանով, որ ոչ ոք չիմանա: Այս հանդգնության համար ՔԿՀ ծառայության պետ Սերգեյ Ատոմյանը ազատվեց պաշտոնից, իսկ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանն էլ տեղեկացրեց, որ «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումից հետո նախարարության վերահսկողական վարչությունը դեպքի վերաբերյալ 07.08.2023 թվականին ծառայողական քննություն է սկսել:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 31-ից փետրվարի 1-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 78 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՏՂԱ Է ՎԻՐԱՎՈՐՎԵԼ

Դիլիջանի բնակչուհիներից մեկը ֆեյսբուքյան «Դիլիջանցիք» խմբում գրել է չմաքրված փողոցների ու սառած ճանապարհին վիրավորված իր տղայի մասին՝ հրապարակելով վնասվածքից գլուխը վիրակապած երեխայի լուսանկարը: Դիլիջանցի մայրը գրել է. «Երեխա ենք ուղարկում դպրոց, որ վնասված հետ գամ, քանի որ չգիտեմ՝ ուր են համապատասխան մարմինները, որ ամբողջ ջրհորերի ու դպրոցի ճանապարհը մաքրող տեխնիկա չկա, չասեմ նաեւ՝ մանկապարտեզի հայաթը: Սուտի չմտնեք, ամպագորգոռ խոսքեր գրեք, օրվա 10 ժամից ավելի աշխատանքի վայրում եմ ու չտեսա ոչ մի տեխնիկա»: Գրառման տակ դիլիջանցիները նշել են, որ քաղաքում անտեր վիճակ է, Դիլիջանի փողոցները, բացի փոքր կենտրոնից, ձյան շերտից, սառույցից մաքրված չեն, նրանք վիրավոր տղային մաղթել են շուտ ապաքինում:

ՄՆԱՑԵԼ ԵՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԵՋ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում հրապարակված վերջին տեղեկատվությունը եղել է 2023թ. դեկտեմբերի 27-ին. տեղեկատվությունն այն մասին է, որ «Վեոլիա ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին՝ վթարային աշխատանքներով պայմանավորված Դիլիջան քաղաքի որոշ թաղամասերի ջրամատակարարումը ժամանակավորապես դադարելու է: 2024 թ. հունվար ամիսն ավարտվեց, սակայն հունվարին Դիլիջան համայնքի վերաբերյալ ոչ մի լուր համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրված չէ: Դիլիջանի համայնքապետարանը լռվել-մնացել է 2023 թվականի մեջ: Դիլիջան քաղաքում, այդ համայնքի Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Հովք, Խաչարձան, Աղավնավանք գյուղերում այս տարի որեւէ կարեւոր իրադարձություն չի՞ կատարվել, որի մասին համայնքապետարանի կայքը իրազեկեր:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ԳՈՒՄԱՐ ԿՏՐՎԻ՞

Լոռու մետաղական հանքերի եւ հանքաքարը վերամշակող ընկերությունների կողմից Դեբեդ արտանետումները ավելի քան 20 տարի սպառնալիք են Նոյեմբերյան խոշոր համայնքի Դեբեդի հովտի պտղատու այգիների համար: Ծանր մետաղներով համակված Դեբեդի ջրով ոռոգելուց հետո այգիները չորանում են: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով՝ պատճառված վնասների համար 2024 թվականին Նոյեմբերյան համայնքին որքան գումար է տրվելու: Մարզպետարանի պատասխանում նշված է. ««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերությունների գործունեության հետեւանքով վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների միջեւ բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունների եւ դրանց հաշվարկման սկզբունքների վերանայումը գտնվում է քննարկման փուլում, որի ավարտից հետո Ձեզ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՕՆԿՈԼՈԳԻԱ

ԻՐԱՔԵԿԵԼՈՒ ԽՆԴԻՐ ՈՒՆԵՆՔ

Աշխարհում ամեն տարի գրանցվում է քաղցկեղային հիվանդությունների 10 մլն-ից ավելի նոր դեպք: Դրանց զգալի մասը աշխարհում տարեկան մահացության ցուցանիշը 5 մլն-ից ավելի է: Հայաստանում նախորդ տարի գրանցվել է քաղցկեղային հիվանդությունների 8000 նոր դեպք: Տարվա կտրվածքով մահերի ցուցանիշը կազմել է մոտ 5000: Տղամարդկանց մոտ ավելի հաճախ հանդիպում է թոքի եւ շնչառական ուղիների քաղցկեղը, կանանց շրջանում՝ կրծքագեղձի քաղցկեղը:

ՀՀ ԱՆ Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի փոխտնօրեն, ուռուցքաբան-վիրաբույժ Արթուր Ավետիսյանը նշեց, որ երկարաժամկետ կտրվածքով դինամիկան ցույց է տալիս, որ նկատվում է քաղցկեղային հիվանդությունների աճի միտում, թեպետ կան քաղցկեղի տեսակներ, որոնք մահացության առումով միտում ունեն նահանջելու:

«Օրինակ՝ կրծքագեղձի, հաստ աղիքի, արգանդի վզիկի քաղցկեղի ուղղությամբ մահացության տեսանկյունից նկատվում է նահանջ: Այս ուղղություններով հիվանդությունը հաջողությամբ կարելի է կանխարգելել՝ վաղ շրջանում հայտնաբերելու դեպքում: Ասեմ, որ, օրինակ, մեզ մոտ կրծքագեղձի քաղցկեղի բուժման մեթոդները համարժեք են միջազգային հնարավորություններին, եւ այստեղ բուժման առումով լուրջ հաջողություններ ենք գրանցում: Այստեղ շատ կարեւորվում են կանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ սքրինինգները, որոնք հնարավորություն են տալիս կանանց անվճար հետազոտվել եւ հիվանդության առկայության դեպքում այն վաղ հայտնաբերել»,-ասաց Արթուր Ավետիսյանը:

Կրծքագեղձի օնկոպլաստիկ վիրաբույժ, «Breast Care» նախագծի ղեկավարի Ներսես Բերբերյանը նկատեց, որ վերջին տարիներին բուժառուների շրջանում նկատվում է կանխարգելիչ այցերի աճ: Եթե տարիներ առաջ շատ քչերն էին պարզապես հետազոտվելու համար դիմում, ապա այսօր այդ պատկերը փոխվել է:

«Սա բավական ուրախացնող փաստ է: Միայն այս դեպքում է հնարավոր կրծքագեղձի քաղցկեղը հաղթահարել, քանի որ պարբերաբար հետազոտվելու պարագայում բուժման արդյունավետությունը շատ ավելի բարձր է լինում: Գրեթե լինում է լիարժեք բուժում, ընդհուպ մինչեւ 100 տոկոս արդյունք: Դրա համար մեր հորդորն է՝ պարբերաբար հետազոտվել՝ առանց սպասելու գանգատների»,-ասաց Ներսես Բերբերյանը:

ՀՀ առողջապահության նախարարությունը կարեւոր շեշտադրում է կատարում քաղցկեղային հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների վրա՝ ժամանակ առ ժամանակ դրանք լավարկելով: ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ Քնար Ղոնյանը տեղեկացրեց, որ առաջիկայում նախատեսվում է անվճար հետազոտությունների սքրինինգային ծրագիրն ընդլայնել: Օրինակ՝ կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծրագրի շրջանակում եթե մինչ այս շրջիկ կենտրոնները լինում էին մարզերում, եւ տեղերում որոշակի ժամանակահատվածում հնարավոր էր լինում հետազոտվել, ապա շուտով անվճար հետազոտության ծառայությունը հանրապետության ամբողջ տարածքում հասանելի կլինի ամբողջ տարվա ընթացքում:

«Ներկայում ակտիվ աշխատանքներ են ընթանում համապետական մակարդակով տարածելու եղած սքրինինգային ծրագիրը, մասնավորապես՝ կրծքագեղձի, կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագիրը: Այսօր էլ տարբեր ձեւաչափերով սքրինինգային ծրագրեր իրականացվում են, սակայն, ցավոք, հետազոտվողների ընդգրկվածության ցուցանիշը դեռ բավարար չէ: Այստեղ մենք բնակչությանն առավել շատ իրազեկելու, հետագա ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ շատ անելիք ունենք»,-ասաց Քնար Ղոնյանը:

Քնար Ղոնյանը տեղեկացրեց, որ 2019 թվականից սկսած չարորակ նորագոյացության հաստատված ախտորոշման դեպքում ամբողջ վիրաբուժական միջամտության ծավալը պետությունը երաշխավորում է բոլոր ՀՀ քաղաքացիների համար: Ճառագայթային բուժումը եւս պետությունն ապահովում է անվճար, իսկ քիմիաթերապիայի բուժումն իրականացվում է համաֆինանսավորմամբ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԵԿՆԱՐԿ

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՆ Starlab-Ը ԳՈՐԾԱՐԿԵԼ

Starship հրթիռը այս տասնամյակի վերջին ուղեծիր դուրս կբերի մասնավոր սեփականություն հանդիսացող Starlab տիեզերական կայանը, որը կփոխարինի Միջազգային տիեզերական կայանին (ՄՏԿ): Համապատասխան պայմանագիրը ստորագրել են հրթիռի համար պատասխանատու SpaceX ընկերությունը եւ Voyager Space եւ Airbus ընկերությունների համատեղ ձեռնարկությունը՝ Starlab Space-ը, որն էլ կառուցում է կայանը:

Starlab Space-ը փաստացի դարձավ առաջին կոմերցիոն հաճախորդներից մեկը, որը պատվիրեց Starship-ի մեկնարկը SpaceX-ով: Ընկերությունները չեն հայտնել պայմանագրի արժեքը: Մասնավոր տիեզերակայանը նախատեսվում է արձակել մեկ առաքելությամբ՝ օգտագործելով հսկա SpaceX հրթիռը:

Starlab-ը մի քանի ուղեծրային կայաններից մեկն է, որը ներկայումս մշակվում է ամերիկյան մասնավոր ընկերությունների կողմից: NASA-ն որոշել է 2030-ին ՄՏԿ նախագծի ավարտից հետո ոչ թե ինքնուրույն կառուցել նոր ուղեծրային կայան, այլ դա վստահել մասնավոր ընկերություններին եւ օգտագործել նրանց կայանները կոմերցիոն հիմունքներով:

Voyager-ը եւ Airbus-ը պլանավորում են Starlab-ը գործարկել արդեն 2028-ին: Տիեզերական կայանի մշակման եւ կառուցման չորս տարվա ժամկետը նաեւ SpaceX-ին է ժամանակ տալիս Starship-ի ցուցադրական թռիչքներից անցնելու հաճախորդների պատվերով տիեզերանավերի արձակմանը: Մինչ այժմ Starship-ի երկու արձակումն էլ ավարտվել են հսկա տիեզերանավի պայթյունով, սակայն երկրորդ արձակումը շատ ավելի հաջող էր, քան առաջինը: Սա հույս է ներշնչում, որ երրորդ մեկնարկը, որին ընկերությունն արդեն պատրաստվում է ամբողջությամբ, ավելի լավ կանցնի:

Starlab կայանի մոդուլները կունենան մոտ 8 մետր տրամագիծ, ինչը մոտ կրկնակի գերազանցում է ՄՏԿ-ի մոդուլների տրամագիծը: Սա իր հերթին սահմանափակում է հրթիռների ընտրությունը, որոնք կարող են օգտագործվել կայանը մեկ առաքելության շրջանակում տիեզերք տանելու համար:

Voyager-ի նախագահ եւ գործադիր տնօրեն Դիլան Թեյլորն ասել է, որ Starlab-ի ամբողջ կայանի գործարկումը Starship-ի վրա մեկ առաքելությամբ «մեր ծրագրի ռիսկերը նվազեցնելու ճիշտ ճանապարհն է»: «Այդ դեպքում ստիպված չենք լինի ուղեծրում զբաղվել ռիսկային հավաքմամբ մի քանի արձակումներով»,- Թեյլորն ասել է CNBC-ին:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 4 պատահար. 6 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ՝ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի պատմության թանգարանը պարզաբանում է ներկայացրել Անահիտ աստվածուհու արձանի գլուխը Հայաստանի պատմության թանգարանում ցուցադրելու վերաբերյալ:

Թանգարանի տարածած պարզաբանման մեջ ասվում է. «Հայաստանի պատմության թանգարանը, ի թիվս աշխարհի այլ հեղինակավոր թանգարանների, ակտիվ համագործակցում է նաեւ Լոնդոնի Բրիտանական թանգարանի հետ:

Դեռեւս 2018 թվականին թանգարանը մասնակցել է Բրիտանական թանգարանում կազմակերպված «Ես եմ Աշուրբանիպալը՝ Աշխարհի արքա, Ասորեստանի արքա» միջազգային ցուցահանդեսին, որին թանգարանի հավաքածուից ներկայացվել է 10 բացառիկ նմուշ:

2023 թվականին Բրիտանական թանգարանում բացվեց «Շքեղություն եւ ուժ. Պարսկաստանից Հունաստան» խորագրով միջազգային ցուցադրությունը, որին մասնակցություն ունեցավ նաեւ Հայաստանի պատմության թանգարանը՝ իր հավաքածուից ցուցադրությունում ներկայացնելով 4 բացառիկ նմուշներ (Արմավիրից գտնված ոսկյա կրծքազարդը, կավե ցլակերպ ծիսանոթը (Ք.ա. VI-V դդ.), Էրեբունուց հայտնաբերված արծաթյա հեծյալի ծիսանոթը (Ք. ա. VI-IV դդ.), Արտաշատից գտնված կավե արջակերպ ծիսանոթը (Ք. ա. I դ.)):

Ցուցադրության բացման շրջանակում տեղի են ունեցել բանակցություններ Բրիտանական թանգարանի պատասխանատուների հետ: Մասնավորապես, Բրիտանական թանգարանի տնօրեն Հարթվիգ Ֆիշերի եւ թանգարանի այլ պատասխանատուների հետ հանդիպումներ են ունեցել Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանը եւ Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վարուժան Ներսիսյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկու թանգարանների միջեւ հետագա համագործակցության հեռանկարներն ու նոր հնարավորությունները, ինչպես նաեւ համատեղ ցուցադրությունների կազմակերպման շարունակականության ապահովումը:

Բրիտանական թանգարանի հոգաբարձուների խորհրդի հավանությամբ՝ այս տարի Հայաստանի պատմության թանգարանի «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրով ցուցադրության շրջանակում նախատեսվում է ժամանակավոր տրամադրել Անահիտ աստվածուհու բրոնզե արձանից պահպանված կիսանդրին եւ ձեռքը (Ք. ա. II-I դդ.): Առաջին անգամ այս մասունքային նշանակության ցուցանմուշները կհամադրվեն Հայաստանի պատմության թանգարանում պահվող տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող ուշագրավ ցուցանմուշների հետ:

Ցուցադրության կազմակերպման հետ կապված աշխատանքները շարունակվում են. ավարտից հետո ԿԳՄՍ նախարարության եւ թանգարանի կողմից պաշտոնապես կհայտարարվի ծրագրի մեկնարկի մասին»:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԱՐՑԱԽ

«ՁԵԶ ՀԱՄԱՐ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՄ, ՊԱՐՈՆ ԱԼԻԵՎ»

Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի կազմակերպած կոնգրեսական ճեպազրույցների ընթացքում հանդիպելով կոնգրեսականներ Ջեյմս Կոստայի եւ Բրեդ Շերմանի հետ՝ Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը եւ նախկին պետնախարար Արտակ Բեգլարյանը ներկայացրել են Արցախի ժողովրդի անփակելի իրավունքները, ազգային շահերը եւ ժողովրդավարական ձգտումները:

Ճեպազրույցի ընթացքում Բրեդ Շերմանը հայտարարել է. «Մենք այստեղ ենք պահանջելու Արցախի փախստականների անվտանգ վերադարձի իրավունքը իրենց տներ. տներ, որոնք շատ դեպքերում բնակեցված են եղել նրանց ընտանիքների կողմից հարյուրավոր տարիներ ի վեր: Շերմանը ընդգծել է 907-րդ բանաձեւի սահմանափակումների կիրառման կարեւորությունը՝ ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող օգնության դադարեցումը, ինչպես նաեւ Արցախի էթնիկ զտումների համար Ալիեւի ռեժիմի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու անհրաժեշտությունը: Անդրադառնալով Ալիեւի սուր հռետորաբանությանը, թե Հայաստանի մայրաքաղաք Երեւանը Ադրբեջանի տարածք է, կոնգրեսական Շերմանը հորդորել է Բայդենի վարչակազմին պաշտպանական զինամթերք տրամադրել Հայաստանին՝ «խուսափելու Բաքվի կողմից ծրագրվող հաջորդ ողբերգությունից»: Կոնգրեսականը եզրափակել է իր խոսքը՝ պատասխանելով Ալիեւին, որը պնդում է, որ իր հիմնական թշնամիները աշխարհի հայերն են: «Դե, ես ձեզ համար նորություն ունեմ, պարոն Ալիեւ: Ձեր գլխավոր թշնամիներն աշխարհի բոլոր մարդիկ են, ովքեր հավատում են ժողովրդավարությանը, ովքեր հավատում են մարդու իրավունքներին եւ հավատում են արդարությանը»:

Դատապարտելով Ադրբեջանի կողմից Արցախի էթնիկ զտումները՝ պատգամավոր Կոստան նշել է, որ ԱՄՆ-ն պետք է ավելին անի՝ Արցախի բռնի տեղահանված բնակչությանը մարդասիրական օգնություն տրամադրելու ուղղությամբ: Շարունակելով խոսքը՝ կոնգրեսականը նկատել է. «Մենք պետք է պատասխանատվության ենթարկենք Ադրբեջանի կառավարությանը ոչ միայն էթնիկ զտումների, այլեւ մշակութային ցեղասպանության համար...: Սպառնալիքները, որ հիմա Ադրբեջանն է հնչեցնում Հայաստանի հասցեին, կարծում եմ՝ լուրջ են եւ իրական: Հետեւաբար, պետք է դրանց վերաբերվել որպես այդպիսին»: Նա նաեւ ԱՄՆ-ին կոչ է արել կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու համար Ադրբեջանի կողմից անօրինական պատանդ պահվող Արցախի ղեկավարների եւ հայ ռազմագերիների վերադարձը:

Ճեպազրույցի ընթացքում Ստեփանյանն ու Բեգլարյանը սեփական վկայություններն են ներկայացրել Ադրբեջանի կողմից Արցախի տասը ամիս տեւած շրջափակման դաժան իրողությունների մասին, որոնք գագաթնակետին հասան 2023թ. սեպտեմբերի ցեղասպանական հարձակմամբ, ինչի հետեւանքով բռնի կերպով դատարկվեց Արցախը: Բանախոսները խոսել են արցախահայության դեմ Ադրբեջանի կանխամտածված հարձակումների պատմությունից, ինչը հիմք է հանդիսացել 2023թ. ցեղասպանության:

Արցախցի հյուրերը նաեւ կարեւորել են ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին Արցախի ցեղասպանության համար պատասխանատվության ենթարկումը, ի թիվս ալնի կարեւորելով՝

- Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը՝ հիմնվելով Սենատի S.3000 բանաձեւի ընդունման վրա, որը պարտադրում է 907-րդ բանաձեւի ամբողջական կիրարկում: Մագնիտսկու պատժամիջոցների կիրառումը ռազմական հանցագործությունների եւ էթնիկ զտումների համար:
- ԱՄՆ օժանդակությունն Արցախի բռնի տեղահանված հայությանը, բռնի տեղահանված հայերի անվտանգ վերադարձի երաշխավորումը:
- Ամերիկյան եւ միջազգային ջանքերի ընդլայնումը՝ օգնելու ապահովել 2023թ. սեպտեմբերին գերեվարված Արցախի առաջնորդների եւ 2020թ. ադրբեջանա-թուրքական հարձակումներից հետո ապօրինաբար պահվող ռազմագերիների անհապաղ ազատ արձակումը:
- Արցախի հայկական մշակութային եւ կրոնական ժառանգության պահպանումը:

Ստեփանյանն ու Բեգլարյանն ընդգծել են, որ առանց միջազգային ջանքերի՝ ուղղված Արցախի ժողովրդի անվտանգ վերադարձի իրավունքի իրացմանը, եւ առանց կատարված հանցագործությունների համար պատասխանատվության, տարածաշրջանում անհնար կլինի կայուն խաղաղություն հաստատել: Նրանք նաեւ ընդգծել են, որ Ադրբեջանի կառավարության կողմից բորբոքված համակարգային հակահայկական ատելությունը պետք է արմատախիլ արվի՝ ապահովելու համար հակամարտության կայուն կարգավորումը եւ տարածաշրջանային կայունությունը:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը, որ Կապիտոլիումի բարձունքում ուղեկցում էր Գեղամ Ստեփանյանին ու Արտակ Բեգլարյանին, շարունակում է իր աշխատանքները՝ վերը նշված խնդիրների լուծման գործում ամերիկյան ներգրավվածության մեծացման ուղղությամբ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

1,164,212.8 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ՝ ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅԱՆԸ

Կառավարության որոշմամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը 2024 թ. պետբյուջեով կապիտալ ծրագրերի իրականացման համար չբաշխված գումարներից կատարվել է վերաբաշխում եւ 1,164,212.8 հազար դրամ ուղղվել է «Մինչեւ 2026 թ. 300 դպրոցի կառուցում/վերակառուցում/հիմնանորոգում» ծրագրի շրջանակում ընտրված Երեւանի դպրոցների կառուցման աշխատանքների մեկնարկմանը եւ 2024 թ. շինարարությունն ավարտվող օբյեկտների շենքերի չափագրմանը:

Որոշմամբ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին են փոխանցվում թվով 30 դպրոցի եւ 6 կրթահամալիրի կառուցման աշխատանքների պատվիրատու մարմնի լիազորությունները: Այդ հաստատություններից 7-ը գտնվում է Երեւանում, 6-ը՝ Արագածոտնում, 8-ը՝ Արմավիրում, 4-ը՝ Գեղարքունիքում, 3-ը՝ Լոռիում, 1-ը՝ Կոտայքում, 1-ը՝ Սյունիքում, 6-ը՝ Տավուշում:

Որոշմամբ նաեւ 157.2 մլն դրամ է հատկացվում ՀՀ քաղաքաշինության կոմիտեին՝ Երեւանի թվով 6 դպրոցի անհատական նախագծերի ձեռք բերման համար: Դպրոցները ներառվել են 300 դպրոցի ծրագրում: Այդ հաստատություններն են՝ Գ. Գուրզանդյանի անվան թիվ 163 հիմնական, Ս. Խանզադյանի անվան թիվ 184 ավագ, Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ, Ռաֆֆու անվան թիվ 36 հիմնական, Վ. Դավթյանի անվան թիվ 37 հիմնական, թիվ 173 եւ թիվ 31 հիմնական դպրոցները:

Նախատեսվում է նաեւ գումար հատկացնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ շինարարությունն իրականացվող եւ մինչեւ 2024 թ. մայիսի 1-ը ներառյալ ավարտվող թվով 30 օբյեկտի շենքերի չափագրման ծառայության ձեռք բերման համար: Այդ իսկ պատճառով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացվում է 5,912.8 հազար դրամ գումար՝ չափագրման ծառայության արժեքը հաշվարկելով 250 դրամ:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ-100

ՄԵՌՆՈՒՄ Է ԼԵՆԻՆԸ, ԾՆՈՒՆԴԸ ՉԵՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Պարույր Սեւակի 100-ամյակի առթիվ փետրվարի 1-ին Հայաստանի ազգային գրադարանում ցուցադրվեցին գրողի՝ կենդանության օրոք հրատարակված գրքերը, նրա թարգմանած ու խմբագրած հրատարակությունները ու այլ նյութեր: Առաջին անգամ ցուցադրվեցին «Մարդը ափի մեջ» գրքի համար Մինաս Ավետիսյանի նկարած էսքիզների պատճենները:

Պարույր Սեւակի տուն-թանգարանի տնօրեն, գրականագետ Սեւակ Ղազարյանը, որը Սեւակի թոռն է, շեշտեց՝ ցուցադրության համար բերել է «Անլռելի զանգակատուն» պոեմը՝ ֆրանսերեն թարգմանությամբ, որը լույս է տեսել մի քանի տարի առաջ, ուկրաիներեն թարգմանություններ, նոր հրատարակություններ:

«Սեւակն ինձ համար առաջին հերթին խոշորագույն մտածող էր, մարդ, որը միշտ անկեղծ էր, չէր վարանում բարձրաձայնել իր կարծիքը: Ըստ իս՝ այսօր մեզ առաջին հերթին դա է պակասում, որովհետեւ կարծես բոլորս իրերին միատեսակ ենք նայում: Ինչո՞ւ է Սեւակը մինչ օրս արդիական. որովհետեւ ճշմարիտ խոսքեր է ասել, որ երբեք չեն մաշվում, չեն հնանում»,- շեշտեց Սեւակ Ղազարյանը:

Նրա խոսքով՝ հոբելյանական տարում պատրաստվում են վերահրատարակել «Մարդը ափի մեջ» ժողովածուն: «Ժամանակին, երբ զբաղվում էի ժողովածուի արխիվային նյութերով, անակնկալի եկա: Բոլորիս է հայտնի, որ «Եղիցի լույս» գիրքն է արգելվել, պարզվեց՝ «Մարդը ափի մեջ» ժողովածուն եւս ենթարկվել է գրաքննության: Այս տարի ամբողջական տարբերակով ենք այն դնելու ընթերցողի սեղանին մոտ երկու, երեք տասնյակ նոր ու անտիպ գործերով»,-ասաց Ղազարյանը:

Պարույր Սեւակը ծնվել է հունվարի 24-ին, սակայն ընտանիքի անդամները նրա ծնունդը տոնել են հունվարի 26-ին: Այս տարին բացառություն չի եղել: «Սեւակի ծնունդից երեք օր առաջ մեռնում է Լենինը, եւ նորածնի ծնունդը չեն գրանցում, որովհետեւ երկրում սուգ է հայտարարված լինում: Ծնունդը գրանցում են 26-ին: Հունվարի 24-ին հոբելյանը նշեցինք տուն-թանգարանում կազմակերպված միջոցառմամբ, այնուհետեւ՝ Համազգային թատրոնում ներկայացմամբ, իսկ հարազատներով հավաքվեցինք հունվարի 26-ին»,-պատմում է գրողի թոռն ու հավելում, որ այս տարի իր հորեղբայրը, որն 1990 թվականից ԱՄՆ-ում է եղել, ընտանիքով եկել է Հայաստան: Նրանց ընտանիքը, Սեւակի կրտսեր որդու՝ Արմեն Ղազարյանի եւ Հրաչյա Ղազարյանի ընտանիքները միասին են տոնել մեծ գրողի 100-ամյակը:

Արվեստաբան, գրականագետ Երվանդ Տեր-Խաչատրյանն էլ անդրադարձավ հեղինակի գրքերին՝նշելով, որ դրանք հեշտ ճակատագիր չեն ունեցել: Նա հիշեցրեց, որ 1957 թվականի սեպտեմբերի 11-ից Սեւակը սկսել է գրել «Անլռելի զանգակատուն» պոեմը, որն ավարտել է 1958 թվականի նոյեմբերի 21-ին: «Ավելի քան 7000 տող է: Թվում է՝ մի շնչով գրված ստեղծագործություն է: Այն տպագրվում է 1959 թվականին: Երբ 1966-ին վերահրատարակվում է, բանաստեղծն ահագին փոփոխություններ է անում, ավելացնում է «Ողանջ հերոսական»-ը եւ այլն, որովհետեւ մենք նաեւ կռվել էինք, պայքարել էինք»,- ընդգծեց Տեր-Խաչատրյանը:

Նա հետաքրքիր է համարում այն, որ գիրքը ցնցող ազդեցություն է ունեցել: «Մի ամբողջ ժողովուրդ, որ սովորել էր կոլխոզական կյանքի վեպերին՝ հողը, ոսկե վազերը եւ այլն, շուռ եկավ դեպի պոեզիա: Այդ գիրքը կարդում էին բոլորը դպրոցներում, համալսարաններում, ամենուր արտասանում էին»,-շեշտեց գրականագետը:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի խորհրդական Ներսես Հայրապետյանն էլ ուրախությամբ նշեց՝գրադարանն ամփոփել է հունվար ամսվա ամենաընթերցված գրքերի տվյալները հանրային գրադարաններում ու պարզել, որ Սյունիքի, Վայոց ձորի եւ Կոտայքի մարզերում Պարույր Սեւակն առաջին տեղում է:

Օրերս գրադարանում քննարկվել է Պարույր Սեւակի մատենագիտություն կազմելու հարցը: Ծրագրում են երեք հատոր լույս ընծայել, իսկ գրողին նվիրված միջոցառումները շարունակական կլինեն:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՓԱՐԱՋԱՆՈՎ-100

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը երեկ հանդիպել է «Բումերանգ Մեդիա.ԱՄ» ֆիլմարտադրող ընկերության ներկայացուցիչների հետ:

Ինչպես տեղեկացանք ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, հանդիպմանը ներկա են եղել ազգությամբ հնդիկ հոլիվուդյան հայտնի կինոռեժիսոր Թարսեմ Սինխը, կանադահայ վաստակաշատ օպերատոր Նորայր Կասպերը, «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Սերգեյ Փարաջանովից մեր օրեր» լիամետրաժ վավերագրական ֆիլմի ռեժիսոր Ջառա Ջյանը, ֆիլմի պրոդյուսեր Անի Որսկանյանն ու խմբի այլ անդամներ:

«Հանդիպման առանցքում անվանի կինոռեժիսոր, սցենարիստ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին նվիրված «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Սերգեյ Փարաջանովից մեր օրեր» լիամետրաժ վավերագրական ֆիլմի ստեղծագործական խմբի հետ ծանոթությունն էր, որի ընթացքում քննարկվել են նաեւ համագործակցությանն ուղղված մի շարք հարցեր:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը ողջունել է հյուրերին եւ գոհունակություն հայտնել անվանի կինոգործիչ Թարսեմ Սինխի՝ Հայաստան այցելության, մեր երկրի նկատմամբ հետաքրքրության եւ ճանաչողության բարձրացման համար: Նախարարի տեղակալը կարեւորել է «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով. Սերգեյ Փարաջանովից մեր օրեր» լիամետրաժ վավերագրական ֆիլմում նրա նկարահանվելու փաստը եւ հավելել է, որ ֆիլմի ռեժիսոր Ջառա Ջյանը բոլոր հնարավորություններն օգտագործել է՝ ապահովելու Թարսեմ Սինխի մասնակցությունը ֆիլմում»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ անդրադառնալով երկու մշակույթների ընդհանրություններին եւ տարբերություններին՝նախարարի տեղակալը նշել է, որ համատեղ գործակցությամբ հնարավոր է աշխարհին պատմել եւ ներկայացնել այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են երկու երկրների մշակույթներին. «Ուրախալի փաստ է, որ նկարահանվելու եք այս ֆիլմում, սակայն մեր հնարավոր համագործակցությունը վստահաբար կարող է արդյունավետ լինել նաեւ կինոարտադրության ոլորտի այլ նախագծերում: Անչափ կարեւորում եմ նաեւ մեր համատեղ գործակցությունը տարբեր հարթակներում՝ կինոշուկաների, կինոփառատոների շրջանակներում»:

Յ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականն ընկերական հանդիպում կանցկացնի Սլովենիայի ընտրանու հետ:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՖՖ-ի եւ Սլովենիայի ֆուտբոլի ֆեդերացիայի միջեւ: Սլովենիա-Հայաստան հանդիպումը կկայանա Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի «Ստոժիցե» մարզադաշտում հունիսի 4-ին: Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Հայաստանի ազգային հավաքականը մարտի 26-ին Պրահայում ընկերական հանդիպում կանցկացնի Չեխիայի հավաքականի հետ:

ԿՀԵՌԱՆԱ

«Ֆորմուլա-1»-ի ավտոարշավորդ, աշխարհի բազմակի չեմպիոն Լուիս Հեմիլթոնը նոր մրցաշրջանում կհեռանա «Մերսեդես»-ից:

Ավտոմրցարշավների աշխարհի յոթակի չեմպիոն բրիտանացի Լուիս Հեմիլթոնը չի շարունակի համագործակցությունը գերմանական «Մերսեդես»-ի հետ եւ կմիանա իտալական «Ֆերրարի»-ին: Այս մասին գրում է AS-ն: Ըստ պարբերականի՝ Հեմիլթոնը իտալական թիմին կմիանա 2025 թվականին: Այժմ երկու կողմերի միջեւ ընթանում է բանակցությունների վերջին փուլը: Աշխարհի յոթակի չեմպիոնը նախորդ մրցաշրջանում եզրափակում էր լավագույն եռյակը: Հեմիլթոնը «Մերսեդես»-ի թիմում է 2013 թվականից:

ՖԻԴԵ-Ի ԱՂՅՈՒՍԱԿԸ

Շախմատի միջազգային ֆեդերացիան՝ ՖԻԴԵ-ն, հրապարակել է փետրվար ամսվա դասակարգման աղյուսակը: Տղամարդկանց դասակարգման աղյուսակում Հայաստանն ունի 4 ներկայացուցիչ: Հայկ Մարտիրոսյանը 50-րդ հորիզոնականում է, Գաբրիել Սարգսյանը՝ 60-րդ, Սամվել Տեր-Սահակյանը՝ 97-րդ, Հրանտ Մելքումյանը՝ 98-րդ: Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը, որն այժմ հանդես է գալիս ԱՄՆ դրոշի ներքո, դասակարգման աղյուսակում 24-րդն է: Կանանց վարկանիշային աղյուսակում Էլինա Դանիելյանը 53-րդ տեղում է, Լիլիթ Մկրտչյանը՝71-րդ, Աննա Սարգսյանը՝73-րդ:

ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Եռօրյա պայքարից հետո հայտնի են Հայաստանի դահուկավազքի 2024 թվականի առաջնության հաղթողներն ու մրցանակակիրները: Աշոցքի դահուկային կենտրոնում կայացած առաջնությունում, ինչպես նախորդ տարի, այս տարի եւս բացարձակ չեմպիոններ են Միքայել Միքայելյանը եւ Կատյա Գալստյանը:

Տղամարդկանց 10 կմ ազատ ոճում լավագույններն Աշոցքի ներկայացուցիչներն էին՝ Միքայել Միքայելյան՝ ոսկի, Սպարտակ Ոսկանյան՝ արծաթ, Թադեւոս Պողոսյան՝բրոնզ: Կանանց 5 կմ ազատ ոճում պայքարում միակ մեդալակիրը Կատյա Գալստյանն է, որը լավագույն արդյունք է գրանցել նաեւ դասական ոճում եւ արագավազքում: Տղամարդկանց 10 կմ դասական ոճում եւ արագավազքում նույն մեդալային հերթականությունն է՝ Միքայելյան, Ոսկանյան, Պողոսյան:

● Փետրվարի 3-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Քշի գնա» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք կենսաթոշակը վճարվել լիազորագրով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչ ժամկետում է վճարվում չվճարված կենսաթոշակի գումարը:

Արուսյակ Հովակիմյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ կենսաթոշակը վճարվում է Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքում, նաեւ այդ պետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով: Չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնենք, որ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե կենսաթոշակառուն ներկայացրել է տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե գործուղման դեպքում գիշերավարձի գումարը փաստաթղթով հիմնավորված չէ, ապա տվյալ գումարը ենթակա՞ է նվազեցման գործուղման մեկնած ֆիզիկական անձի համախառն եկամտից:

Լիաննա Իսրայելյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «բ» կետի եւ 16 ապրիլի 2001թ. N 02/456 հրամանի 12.2.-ի համաձայն՝ փոխհատուցման վճարներ են համարվում աշխատանքային պարտականությունները կատարելու համար գործատուների կողմից իրենց աշխատողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ չափերով տրվող փոխհատուցումները, մասնավորապես՝ գործուղման վճարները:

Համախառն եկամտից նվազեցվում են ՀՀ տարածքում եւ ԼՂՀ գործուղվելու դեպքում ոչ պետական եւ ոչ համայնքային բյուջեներից ֆինանսավորվող գործուղումների համար ՀՀ կառավարության 29.12. 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված գիշերավարձի եւ ճանապարհածախսի նվազագույն չափերը չգերազանցող գումարների սահմաններում գիշերավարձի գումարները՝ անկախ փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից, իսկ այդ չափերը գերազանցող գիշերավարձի եւ ճանապարհածախսի գումարները՝ միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

Օտարերկրյա գործուղումների դեպքում գիշերավարձի փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը փոխհատուցվում են նշված որոշմամբ տվյալ երկրի համար սահմանված գիշերավարձի նվազագույն նորմայի 70% սահմաններում:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Զախարյանը լուրջ վնասվածք է ստացել «Ռայո Վալեկանոյի» դեմ խաղում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



	Շիրակ	-18 - 23 - 2 - 5
	Կոտայքի լեռներ	- 14 - 17 - 2 - 6
	Կոտայքի նախալեռներ	- 6 - 9 - 1 + 2
	Գեղարքունիք	- 13 - 17 -2 - 4
	Լոռի	- 13 - 18 + 1 + 4
	Տավուշ	- 3 - 7 + 3 + 7
	Արագածոտնի լեռներ	- 15 - 18 - 2 - 6
	Արագածոտնի նախալեռներ	- 6 - 9 0 + 3

	Արարատ	- 5 - 7 + 3 + 5
	Արմավիր	- 6 - 9 + 3 + 5
	Վայոց ձորի լեռներ	- 13 - 17 - 3 - 5
	Վայոց ձորի նախալեռներ	- 5 - 9 + 3 + 5
	Սյունիքի հովիտներ	- 3 - 7 + 5 + 8
	Սյունիքի նախալեռներ	- 9 - 14 0 + 4
	ԼՂՀ	- 9 - 12 0 + 4
	Երեւան	0 - 1 0 + 3

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.2.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*